Լևոն Խեչոյան

Պաղ քամի

Գյուղի ամենագեղեցիկ աղջիկն ամուսնացավ: Հորեղբորս տղան մեր գյուղի անտառում գառ մորթեց, Ախալքալաքի զինկոմի սարիատից ու կայազորից պաշտոնավոր մարդկանց հրավիրեց, կերան, խմեցին: Սպայի կոչում ստացավ, կամավոր գնաց Աֆղանստան՝ կռվե լու: Այդ օրերին պրոպագանդայի բոլոր միջոցները զօր ու գիշեր խոսում էին այնտեղ ինտերնացիոնալ պարտքը կատարող մեր զորքերի մասին: Հորեղբորս, հաստ նոսր բեղերով կինը գնացել էր գյուղխորհուրդ, որպես պատերազմի մասնակցի ընտանիք, լրացուցիչ՝ քսանհինգ հար հողաբաժին էր պահանջել: Գյուղխորհրդի նախագահը նրան մերժել էր: Ու երբ բացատրել էր, որ նրան ոչ թե զորակոչել են, այլ նա ինքն է կամավոր, իր կամքով գնացել, մեր ընտանիքին նոր ահ հասավ, նոր սուգ սկսվեց, նոր հորեղբորս կինը ամբողջ գյուղով ողբը գցեց: Նոր հասկացանք, որ նա այլեւս հետ չի գա: Երկու տարվա ծառայության ընթացքում նամակներ էր գրում: Ուղտերի մեջքին նստած, ուռած փորերով մանչուկներին գրկած, անապատներում՝ չալմայված դեմքերով մուսուլմանների հետ, սեւ ակնոցներն աչքերին՝ տարբեր զենքերով զինված, նեգատիվներ էր ուղարկում, գյուղում լուսատպում էինք ու հիանում նրանով: Մի օր էլ արձակուրդ եկավ: Մոսկվայից՝ կտրոնների հատուկ խանութից «Շարպ» մակնիշի մագնիտոֆոն էր առել եւ տատիս համար նիկելապատ, կուրացուցիչ շողշողացող մի խոշոր գիշերանոթ էր բերել: Տատիս ասավ . «Աբա, էլ զուգարան չես գնա, արտասահմանյան է»: Տատս զարմացած ասավ . «Քա, ի՞նչ կըսես, մանչ, ամոթ է, ի՞նչ է, արտասահմաններում ժողովուրդը տների մե՞ջ է անում»: Երբ մերոնք գնում էին դաշտային աշխատանքների՝ տնից մինչեւ բանջարանոցի ծայրամասում գտնվող զուգարանը մի երկար պարան էին կապում, տատս պարանը բռնած, զուգարան

էր գնում-գալիս, ու նրա կուրությունը ոչ մեկին նեղություն չէր տալիս: Երբեմն պատահում էր՝ պարանը մեջտեղից այծերն էին կրծելով կտրում կամ մենք էինք արձակում զուգարանից ու մեկ ուրիշ բանից կապում: Մոլորված կանգնում-մնում էր ճանապարհի մեջտեղը ու շփոթելով մեր բոլորի անուններն իր հանգուցյալ ծնողների անվան հետ՝ օգնություն էր կանչում: Նրանից կինո գնալու համար փող էինք պահանջում ու նոր տեղ հասցնում: Տանեցիները դաշտ էին գնացել՝ խոտ հավաքելու: Երվանդը, թախտին պառկած, առաստաղին էր նայում ու մագնիտոֆոն լսելով անցկացնում արձակուրդի առաջին օրերը: Տատս ծալապատիկ նստած տերողորմյան էր քաշում: Մենք դռանը խաղում էինք, փոստատար Գաբոն եկավ, մենք նրա հետեւից մտանք օդան: Երվանդին նամակ տվեց: Տատիս ասավ . «Մամ, մի պապիլոզ տուր, իմը վերջացել է»: Տատս մի հատ էլ ինքը վառեց, նրանք զրուցում էին: Տատս հարցրեց . «Գաբո ջան, էդ ի՞նչ նամակ էր»: Գաբոն ասավ . «Չգիտեմ, Էնտեղից էր, Աֆղանստանից»: Հետո Երվանդին մոտեցավ . «Երվանդ ջան, մեզ ներող եղեք, քանի՞ մեդալ ունես»: Երվանդը նամակը ձեռքին նստել, լռում էր: Գաբոն ասավ . «Երվանդ ջան, մենք օբսալյուտնո…»: Նա ասավ . «Որ ելա տեղիցս, եկած ճամփադ չես գտնի»: Գաբոն ասավ . «Մենք ներողություն», ու տատիս հարցրեց . «Մամ, դու չգիտե՞ս, մեր տղան քանի՞ մեդալ կունենա: Ասում են՝ վերին գեղերից էնտեղից մի ոտքով եկած մեկն էլ կա, յոթ-ութ հատ ունի, չիդեմ, ընչի սիրտս վկայում է, որ մեր Երվանդը ավելի շատ կունենա»: Տատս ասավ . «Չգիտեմ, Գաբո ջան, տեսա՞ր խոսելու ձեւը: Էս մեր ծռվածը մեզ էդպես բան ասող, ուրախացնողը չէ»: Տատիս խնդրեց, որ թող մի բան անի, իմանա ու ինքը գնաց: Երվանդը նամակը ձեռքին դեռ նստած էր, հետո մագնիտոֆոնը անջատեց, տատս դեռ ծխում էր, արոտից հետ պահած հիվանդ այծը թափառում էր օդայի մեջ, նա դարձյալ նամակը ձեռքին նստել, մնացել էր: Տատս հարցրեց . «Մանչ, մեջքիս սառը, պաղ քամի է փչում, դուռը խոմ բաց չի՞ մնացել: Խաղ աստղը ինչի՞ լռեց, էդ ի՞նչ նամակ էր, չլինի՞ քեզ հետ են կանչում»: Ասավ՝ չէ: Հինգ օր անց փոստատար Գաբոն դարձյալ նամակ բերեց: Հետո՝ էլի: Տատս ասավ . «Ինչ-որ տեղից մեջքիս սառը քամի է փչում»: Ու այդ օրը հաստատապես հայտարարեց, որ մեր տան մեջ մեզանից բացի էլի մեկը կա: Ասինք . «Սխալվում ես, արոտից հետ պահած այծն է տան շվաքներում թափառում»: Ասավ . «Այծը չի թափառում, այծը խրտնած է ինչ-որ բանից»: Ասավ . «Գոմում մալը ամբողջ գիշեր չորոճաց»: Մնաց հորեղբայրս ասաց . «Մալ է, էլի, վաղը գիշեր կորոճա»: Տատս ասավ . «Մանչը

հետս որ խոսում է, ոնց որ անցյալի միջից խոսա, մի բանըմ կա»: Նրան ասին . «Տեսողությունդ կորցրել ես, մտքով քեզնեն դուրս բաներ ես տեսնում»: «Աստված տա այդպես լինի, բայց տան մեջ թափառողը կին է, փեշերի շրշյունն եմ առնում»: Ասինք . «Կնի՞կ, կարո՞ղ է ջրահարս է մտել տունը…», ծիծաղեցինք: Ասինք . «Ծերացել ես, աբա»: «Կատուն խելոռած՝ հինգ օր է տուն չի գալիս, ծիծաղում եք, թե ծերացել եմ: Արդեն տասներորդ գիշերն է գյուղի բոլորը բուն չի կանչում»: Մնաց հորեղբայրս ասավ . «Տարիքին նայե, խոսացածին նայե, ի՞նչ անենք, որ բուն չի կանչում, սուգ մտնե՞նք: Աբա, ախր հասկացիր, քոռ բու է, կպել է քարին, ծառին սատկել է, չկա»: Տատս ասավ . «Ուր է, թե ձեր ասածը լինի, ախր օդում չղջիկն էլ չի պտտվում…»: Մի օր Երվանդը ձուկ բռնելու էր գնացել, էլի նամակ եկավ: Տատս ասավ . «Մանչը դադարը կորցրել է, մի բացեք, տեսնենք էդ ի՞նչ նամակներ են»: Բացեցինք՝ փոքրիկ սպիտակ թուղթ էր: Տատս զարմացավ . «Գիր չկա՞, առանց գրի ի՞նչ նամակ»: Ասավ . «Մեկը նստեց անկյունում, էդ ո՞վ էր»: Ասինք . «Մարդ չկա, բարձն էր ծալքից ընկավ»: Ասավ . «Ինչ-որ տեղից սառը, պաղ քամի է փչում»: Ասինք . «Դուռը գոց է»: Թոշակառու Մարկոսը Ախալքալաքի շրջանային թերթի երբեմնի խմբագիրն էր: Մորս հետ գնացինք նրա մոտ: Ասինք . «Մեր աբան ասում է, չգիտենք ու չենք հասկանում, էս ի՞նչ բան է, տղան ամեն հինգ օրը մեկ էս նամակներից է ստանում»: Խմբագիր Մարկոսը թղթին նայեց, հետո՝ մեզ . «Էդ երկիրը մտնելուց առաջ, մի հատ թող ուսումնասիրեիք էդ ժողովրդի պատմությունը, տեսնեիք՝ երբեւէ դրանք հնազանդվե՞լ են որեւէ մեկին, հետո թող նոր ավիրեիք»: Նա մեզ հետ այնպես էր խոսում, կարծես ես ու մայրս էինք մտել այդ անհնազադ երկիրը ավիրելու: Մինչ նրա կինը՝ Շուշանը, ակնոցները կբերեր, ականջներս պինդ ձգեց անցյալ օրը իրենց հանդից գազար գողանալու համար: Հետո երկար թղթին նայեց . «Ինչքան իմ գիտելիքները հուշում են, այսպես ասած՝ սա նամակ է, կսկծից տառապող մոր նամակ: Մուսուլմանների մոտ նամակագրության այս ձեւը հետապնդելու միջոց է: Այս սպիտակ թուղթը նշանակում է, թե մայրը իր ուրվական-ինքնանմանակին ուղարկում է մեր մոտ՝ Երվանդին հանգիստ չտալու»: Տատիս պատմեցինք: Ասավ . «Ինչ-որ տեղից մեջքիս սառը, պաղ քամի է փչում»: Երեսին խաչ հանեց . «Իսուս Քրիստոս, էս ի՞նչ մեծ մեղք է գործվել…»: Հորեղբորս ասավ . «Առավոտյան մի որձ գառ հետ առեք հոտից»: Նա Սուրբ Հովհաննեսի պատվանդանին ուրվական մորից թողություն խնդրեց: Գառը մատղեցինք, բաժանեցինք գյուղին: Գյուղը չէր հանգստանում: Նա խիր գնացած կովերը հորթ

էին գցում, իսկ ցուլը նախիրի մեջ չէր մտնում, ինչ-որ բանից սարսափած՝ բառաչելով գյուղ էր փախչում: Հետո Քոռ կամրջի մոտ գայլերը Երանոսի երկու ոչխարներին էլ կերել էին: Սատանա Մուկուչը դաշտից տուն գալիս, հին գերեզմանոցից իրեն կանչող օտար կնոջ ձայն էր լսել: Գյուղացիներն ուրվականի իրենց հետապնդելը կապում էին Երվանդի արձակուրդ գալու հետ ու դժգոհում էին:

Երվանդը մնաց հորեղբորս հետ, տան բոլոր անկյուններում ուռկանով թակարդներ էին դնում եւ կացինն ու գերանդին առած՝ մարագի գոմի շվաքների մութ տարածություններից ուրվականին քշում էին դեպի ցանցերը: Ու այնքան էին թոչկոտում վեր ու վար, որ հորեղբայրս ասում էր . «Քիչ է մնում միզափամփուշտս կտրվի, ընկնի»: Հետո հարբում էին, համարյա հարբում էին: Մի անգամ խմած ժամանակ, շալվարի փողքը վերեւ քաշեց, ազդրին ձգած փոկ երը արձակեց ու դնովի ոտքը շպրտեց մսուրների ետեւը՝ այն հավանական տեղը, որտեղ կլիներ ուրվականը ու գոռաց . «Առ, շան քած, տես, բա ինչո՞ւ 41 թվականին իմ մայրը ոչ մեկի հետեւից չգնաց»:

Հորեղբորս կինը ասավ . «Լենինգրադից էդ անտերը ինը հարյուր ռուբլով բերել տվեցինք, ինչի՞ ես ջարդում, տեսնեմ առավոտ առանց ոտքի ոնց ես քաղի գնալու», եւ սկսեց լացել:

Տատս ասավ . «Մանչը դողում է, էդ ո՞վ էր Երվանդիս մոտեցավ…»: Երվանդը ասավ . «Շվաքի դուռը բաց է, քամին է պտտվում»: «Ինձ մի խաբեք, տաք գոմի միջով քամին որ անցներ, մալը կմնչար»: Երվանդը ասավ . «Կյանքներս կերար, աբա, բան չեղած տեղը վախեցնում ես բոլորիս, էդ ինչի՞ միայն դու ես տեսնում»: «Քա, բալա ջան, բուղան չառած կովը հուզմունքից արդեն երկու օր է ցամաքել է, կովին էլ խոմ ես չե՞մ վախեցրել»: Առավոտյան տատս սնդուկից հինգ հարյուր ռուբլի հանեց, հորեղբորս ուղարկեց Ախալքալաք: Ջինկոմիսարը նրան ասել էր . «Չէ, չեմ կարող: Հասարակ զինվոր լիներ, էլի կարելի էր մի բան հնարել, մի ամիս էլ պահել: Նա սպա է, այն էլ հերոս: Երկու կարմիր աստղ ունի, էնա համարյա հերոս է, էլի, նրա նման սպան այնտեղ պետք է, համ էլ կարող է ինձ էլ ստուգեն…»: Մերոնք չէին իմանում՝ ինչ անեին: Տատս ասավ . «Ախր մանչուն կրնկակոխ հետեւում է, մանչը օտարության մեջ չի կարող գլուխը պրծացնել»:

Երվանդին ասին . «Մի գնա, թող դատեն: Մի երկու տարի էլ կնստես»: Ասին . «Մի գնա եւ վերջ»: Ասավ . «Չեմ վախենում: Այնքան էլ վախենալու բան չէ, կգնամ: Ջենքը որ վրաս եղավ, կվախենա, չի մոտենա»: Հետո ուրվականը սկսեց շրջել գյուղում: Նրա մասին սկսեցին խոսել այստեղ ու այնտեղ: Նրա ներկայությունը զգում էին բոլորը: Խուճապահար հավերը սկսեցին ձվերը կորցնել՝ դնում էին որտեղ պատահեր: Կանայք տների շուրջբոլորը թաց ծղոտ ու աթար էին ծխացնում, որպեսզի նա բնակարանները չմտնի ու դժգոհում էին Երվանդի արձակուրդ գալուց: Մի օր, երբ Երվանդը տանը չէր, տատս հորեղբորս կնոջը կանչեց ու ասավ . «Դու մայր ես, պիտի կարողանաս անել…»: Տատս նրա հետ շշուկով խոսեց: Հորեղբորս կինը շշմել, նայում էր նրան: Տատս ծխում էր, ասավ . «Պիտի կարողանաս անել: Դա միայն դու կարող ես անել…»: Հորեղբորս կինը, երեկոյան թեյի ժամանակ, եռացած թեյնիկը «պատահաբար» ձեռքից գցեց: Բժիշկը Երվանդի գնալը մի ամսով հետաձգեց: Ուսից մինչեւ ձեռնաթաթը առաջին աստիճանի այրվածք էր ստացել: Նա ոչ մեկին չլսեց, հրաժարվեց հիվանդության թերթիկից, վերցրեց ճամպրուկը ու համբուրվեց բոլորիս հետ: Տատս ասավ . «Ինչ-որ տեղից մեջքիս սառը, պաղ քամի է փչում»: Չպատասխանեցինք, համարյա չպատասխանեցինք: Ասին . «Աբա, տաք, պայծառ արեւ է»: Ասավ . «Մեղվի ձայն չեմ առնե, մեղուն փեթակից դուրս չի գա, օդի մեջ կտրող պաղություն կա»: Ասին . «Բացատրություններ տալու տեղ մեջքիդ շալ կապե»: Ասավ . «Մեկը դուրս եկավ մանչուն կրնկակոխ»: Ասինք . «Կա տուն էր ոտնատակ ընկնում»: Ասավ . «Կատուն չէ, կատվի քայլվածքը էդքան թեթեւ ու պաղ չէ»: Հորեղբայր Մնացս բղավեց . «Կրակ խոմ չես, այ կնիկ, խելքդ գլուխդ ժողվե»: Տատս ասավ . «Էն կինն է, տանից դուրս եկավ, գնաց մանչու հետեւից»: